

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 37/5**

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 25.04.2018թ. N4100470 ակտի դեմ «ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Նախապատմություն կամ բողոքարկման առարկա.

2018թ. մարտի 28-ին «ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) ստացվել է ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏ-վարչության պետի N43 գրությունը, որի վերաբերյալ գրությունն ուղարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին, սակայն պատասխան չի ստացվել:

2018թ. մայիսի 7-ին ստացվել է ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏ-վարչության ստուգումների թիվ 15 բաժնի պետի 05.05.2018թ. N94 գրությունը, որին կից ներկայացված է եղել 25.04.2018թ. կազմված N4100470 ակտը:

Հարկային մարմնի գործողություններին, այդ թվում՝ կայացված որոշմանը տրվող իրավական գնահատական՝ եզրահանգում.

ՀՀ ՊԵԿ նախագահին ուղարկված գրության մեջ նշվել է, որ որևէ ստուգում չի եղել և ընկերության համար անհասկանալի է, թե ինչի մասին է ընդհանրապես խոսքը: Այս ամենն ընկերության կողմից գնահատվում է վարչական ճնշում և ոչ իրավաչափ գործողություն:

Բանն այն է, որ արդեն շուրջ երկու տարի շարունակ «ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ-ն, չհամակերպվելով հարկային մարմնի Հրազդանի տարածքային հարկային տեսչության հետապնդումների հետ, շարունակում է իր իրավունքների ու օրինական շահերի արտադատական և դատական պաշտպանությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 25.04.2018թ. N4100470 ակտը:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 13.03.2018թ. N4100470 հանձնարարագրի համաձայն ցում կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության

25.04.2018թ. N4100470 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Նորիկ Գալստյանի կողմից 23.03.2018թ. ժամը 01:00-ի սահմաններում ք.Հրազդան, Վանատուր, Օղակաձև խաչմերուկ հասցեում գտնվող «ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ-ի գազալցակայանից կատարվեց գնում ընդամենը 5200 դրամ արժեքով՝ 26 խմ սեղմված բնական գազի լիցքավորում, միավորի գինը 200 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ընկերության գանձապահ Զոհրաբ Ստեփանյանի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ՀԴՄ-ից հնարավոր չեղավ դուրս բերել «Z» հաշվետվություն, քանի որ ՀԴՄ-ն գտնվում էր անսարք վիճակում:

Ստուգմամբ պարզվեց, որ խախտվել են ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման N3 հավելվածով սահմանված ՀԴՄ-ի կիրառության կանոնների 9-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները, որը նույն հավելվածի 24-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն դիտվում է հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտում:

Արդյունքում կիրառվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված տուգանքը՝ 150.000 դրամի չափով:

### **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

Իր հերթին, ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման N3 հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների կամ մասնակի վճարումների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն:

Նույն հավելվածի 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց, իսկ 3-րդ ենթակետի համաձայն՝ գնված ապրանքի

կամ ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության արժեքի (այդ թվում՝ կանխավճարի) չմուտքագրումը կամ դրանց արժեքից ցածր արժեքի (այդ թվում՝ կանխավճարից ցածր կանխավճարի) մուտքագրումը:

Ընդ որում, ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման N3 հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իր ղեկավար անձին, որն սպասարկման կենտրոնին տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը սուղանվում է 150 հազար դրամի չափով:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Նորիկ Գալստյանը նշեց, որ իր կողմից 23.03.2018թ. ժամը 01:00-ի սահմաններում ք.Հրազդան, Վանատուր, Օղակաձև խաչմերուկ հասցեում գտնվող «ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ-ի գազալցակայանում 26 խմ սեղմված բնական գազի լիցքավորման դիմաց ընկերության գանձապահ Ջոհրաբ Ստեփանյանին է վճարվել 5200 դրամ: Սակայն վերջինիս կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք մեքենան դուրս են բերել գազալցակայանի տարածքից: Այնուհետև, մոտեցել են գանձապահ Ջոհրաբ Ստեփանյանին, ներկայացրել են ծառայողական վկայականները և խնդրել, որպեսզի ներկայանա ընկերության տնօրենը: Ջոհրաբ Ստեփանյանը զանգահարել է ոմն մեկին: Որոշ ժամանակ անց ներկայացել է Էդգար անունով անձնավորությունը, ում տեղեկացվել է կատարված խախտման մասին: Ստուգող անձինք փորձել են ՀԴՄ-ից դուրս բերել «Z» հաշվետվությունը, ինչը չի հաջողվել, քանի որ ՀԴՄ-ն գտնվել է անսարք վիճակում: Ստուգող անձանց կողմից տեղում կազմվել է արձանագրված խախտման վերաբերյալ թիվ 4100470/1 արձանագրությունը, որը ստուգման հանձնարարագրի հետ միասին ներկայացվել է Էդգարին՝ ստորագրման համար: Սակայն վերջինս հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ նա իրավասու չէ, քանի որ չի հանդիսանում ընկերության տնօրենը: Արդյունքում ստուգման հանձնարարագրի, թիվ 4100470/1 արձանագրության (ինչպես նաև հետագայում կազմված ակտի նախագծի և ակտի) օրինակներն ընկերությանն են ուղարկվել փոստային ծառայության միջոցով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացակայությունը կամ ստուգման հանձնարարագիրը չստորագրելը կամ հանձնարարագիրն ստանալուց հրաժարվելը հիմք չի հանդիսանում թեմատիկ հարկային ստուգումներ չանցկացնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում իրականացված ստուգմամբ հիմնավորվել է ընկերության կողմից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման N3 հավելվածի վերը նշված դրույթները խախտված լինելու հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 25.04.2018թ. N4100470 ակտի դեմ «ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

